ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, հեռ.՝ (+374 60) 830 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«11» 11 2022 թ.
No 00-7202

**«ՎԱՆ ՔԱՐՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ**
**(հասցե՝ ք. Երևան, Կենտրոն, Ամիրյան փ., 4/7,
պատճենը՝ ք. Երևան, Նոր Նորք, Գայի պ., 2/3,
Էլ. փոստի հասցե՝ ceo@blackfoxconsult.com)**

Հարգելի՛ պարոն Հովհաննիսյան,

Կից ուղարկվում է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 8-ի ««Վան Քարտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գույքի վրա արգելանք դնելու մասին» թիվ 422-Ա որոշման պատճենը:

Առդիր՝ «2» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ**

Կատարող՝ Թերեզա Հակոբյան
Անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (252)

competition.am կայքում հրապարակման օրը՝ 8 դեկտեմբերի 2022 թվական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 նոյեմբերի 2022 թվականի թիվ 422-Ա

«ՎԱՆ ՔԱՐՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՎՐԱ ԱՐԳԵԼԱՆՔ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2022 թվականի նոյեմբերի 8-ի նիստում, քննարկելով «Վան Քարտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) գույքի վրա արգելանք դնելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Հանձնաժողովը 2022 թվականի հոկտեմբերի 18-ին թիվ 386-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 386-Ա որոշում**) Ընկերության կողմից թիվ 4639 գրության 1-4-րդ և 7-րդ կետերով պահանջված տեղեկատվությունը չներկայացնելը որակել է որպես Հանձնաժողովին տեղեկատվություն տրամադրելու հարցում տնտեսավարող սուբյեկտի պարտականության խախտում և Ընկերության նկատմամբ նշանակել է 2 500 000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով տուգանք:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 90-րդ հոդվածի 2-րդ մասին համաձայն՝ Հանձնաժողովի կողմից պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշում ընդունելու դեպքում Հանձնաժողովը կարող է վարույթով պատասխանողի գույքի վրա կիրառված տուգանքի չափով նույն կամ մինչև այդ որոշման անբողոքարկելի դառնալն ընդունված առանձին պատճառաբանված որոշմամբ դնել արգելանք, եթե նման որոշում չկայացնելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել Հանձնաժողովի՝ պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշման կատարումը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունը 2022 թվականի հունիսի 7-ին կնքած պայմանագրով օտարել է «one card», «CryptoOne» և հարակից մյուս ապրանքային նշանների, իր կողմից շահագործվող համակարգի և բջջային հավելվածների նկատմամբ իր բոլոր իրավունքները մեկ այլ կազմակերպությանը, Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1000 ՀՀ դրամ, Ընկերության ակտիվների արժեքը 2020, 2021 թվականներին և 2022 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմել է դրամ և Ընկերության այլ գործունեության վերաբերյալ տվյալներ հայտնի չեն:

Նման պայմաններում Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է Ընկերության գույքի վրա դնել արգելանք, քանի որ նման որոշում չկայացնելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել թիվ 386-Ա որոշման կատարումը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 90-րդ հոդվածի 3-րդ, 6-րդ մասերը, 42-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Վան Քարտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գույքի վրա 2 500 000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով դնել արգելանք:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և ենթակա է անհապաղ կատարման Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշման բողոքարկումը չի կասեցնում դրա կատարումը:

ՆԱԽԱԳԱՀ **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2022 թ. նոյեմբերի 8
Երևան